

ՀՀ ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/2

30 սեպտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Գեորգի Սուքիասյանի 27.08.2014 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի 21.07.2014 թ-ի թիվ 580 որոշման դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի կողմից 21.07.2014 թ-ին ընդունվել է թիվ 580 որոշումը Ա/Ձ Գեորգի Սուքիասյանից 100.640 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի 21.07.2014 թ-ի թիվ 580 որոշումը Ա/Ձ Գեորգի Սուքիասյանի կողմից վերադատության կարգով գանգատարկվել է Հանձնաժողով: Միևնույն ժամանակ Ա/Ձ Գեորգի Սուքիասյանի ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել նաև ՀՀ վարչական դատարան, ընդդեմ ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ՝ ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի 21.07.2014 թ-ի թիվ 580 որոշումը վերացնելու պահանջի մասին:

ՀՀ վարչական դատարանը 23.09.2014 թ-ին կայացրել է թիվ ՎԴ6/0123/05/14 որոշումը, որի համաձայն Ա/Ձ Գեորգի Սուքիասյանի հայցադիմումն ընդդեմ՝ ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ՝ ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի 21.07.2014 թ-ի թիվ 580 որոշումը վերացնելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ:

Վերոգրյալի վերաբերյալ հարկ է նշել, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ»:

Նույն օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է»:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի և 70-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Գեորգի Սուքիասյանի 27.08.2014 թ-ի դիմումով բերված գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ա/Ձ Գեորգի Սուքիասյանի 27.08.2014 թ-ի դիմումով բերված գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝

**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**